# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 սեպտեմբերի 2022 թվականի N 350- Ա**

## «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի 29.08.2022թ. 04/06068-22 գրությունը և «Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Զաքարյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Զաքարյանի՝ «STARMUS FESTIVAL VI. 50 տարի Մարսի վրա փառատոնի միջոցառումներին մասնակցելու նպատակով, 2022 թվականի սեպտեմբերի 5-ից 9-ը, գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում՝ տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Անահիտ Սիմոնյանին:

05.09.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 5
ք. Կապան